Թ. ՄՈՄՋԷՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

I

Պրուսական ոգին Գերմանիայում

Նոր Գերմանիան՝ ինչպէս յայտնի է, իր միութեան հետ միաժամանակ հռչակեց ոյժի, հզօրի իրաւունքի պաշտամունքը։ Քաղաքական այդ դաւանանքը, որ հնագոյն անցեալից մնացած մի անհաճոյ ժառանգութիւն է, մեր ժամանակներում էլի մի անգամ աղգերի եղբայրութեան և արդարութեան գաղափարի հանդէպ ցցուեց որպէս գերմանական Վալհալլայից դուրս եկած մի լեգենդալին զինուած ոգի։ Իրերի այս նոր կացութիւնն ըստեղծելու մէջ Պրուսիայի խաղացած դերը ահագին եղաւ։ Նա տուեց աղդանշանը և ղեկավարեց բոլոր շարժումը։ Բնորոշելու համար այս բոլորը՝ գուցէ սխալ չլինի ասել, որ ոչ թէ գերմանական մանր-մունր պետութիւնները միացան և կազմեցին մեծ Գերմանիա, այլ Պրուսիան բարոյապէս աճեց, լայնացաւ ու փռուեց նրանց բոլորի վրայ։ Նոր Գերմանիան մի մեծ Պրուսիա է։

Եւ Պրուսիայի չորացնող շունչը անցաւ Գերմանիայի մի ծայրից միւսը, առաջ բերելով հասարակական-քաղաքական հասկացողութիւնների հիմնական յեղաշրջումն։ «Զինուած բռունցքը», նիւթապաշտական ձգտումները և ծայրայեղ շովինիզմը դարձան նոր կեանքի առաջնորդող սկզբունքներ և մի մեծ ու քաղաքակիրթ երկրին վայել զուտ մարդասիրական գաղափարներ ճնշեցին ու խամրեցին։ Երեսուն և աւելի տարիներ են անցել, բայց դեռ պրուսական ոգին իշխում է Գերմանիայում՝ այնքան մեղադրանքների, յարձակումների, թշնամանքների առիթ տալով շատ շատերին և ցաւ պատճառում խաղաղու-

թեան և ազատութեան լուսամիտ և անողկնակալ բարեկամներին։

Ճշմարիտ է, շատ անգամ այդ մեղադրանքները զէնք են ծառայում շահագրգռած օտարների ձեռքին յախուռն ու փութկոտ ընդհանրացումների, անարդար ծայրայեղութիւնների համար։ Թշնամանողների մէջ բնականապէս սակաւ չեն և այնպիսիները, որոնց երկրի պատմութիւնը անթիւ ամօթալի էջեր է պարունակում։ Ցաճախ մոռացութեան է տրուում, որ Գերմանիան այնուամենայնիւ գիտական-փիլիսոփայական դեղեցիկ աւանդութիւնների կլասիկական հայրենիքն է, ուր բազմաթիւ են նաև լայնսիրտ, մեծահոգի քաղաքացիներ, որոնք իրանց երկրի սահմաններից շատ հեռուն տեսնել և զգալ գիտեն։ Ֆրանս-պրուսական պատերազմից անցել են երեսուն և աւելի տարիներ, և այդ ժամանակը ահագին փոփոխութիւն է առաջ բերել Գերմանիայի ժամանակակից սերնդից շատերի աշխարհայեացքների մէջ. զինուորական-քաղաքական Գերմանիայի կողքին բարձրացել է այժմ ընկերավարական Գերմանիան ուժեղ ու կազմակերպուած, որ ով գիտէ, ինչ անակնկալներ է պատրաստում ոչ շատ հեռաւոր ապագայի համար։

Այս բոլորը ճշմարիտ է, բայց տարաբախտաբար ճշմարիտ է և այն, որ գերմանական այն հին, լաւ սերունդը, դարաւոր դղեակների աշտարակների մելանխոլիկ ստուերներում երազել ու խորհել սիրող շիկահեր բարի գլուխները չկան այլևս։ Նրանց տեղ մի բուրժուա, մեծամիտ, յաւակնոտ սերունդ է իշխում, որ յաղթական Գերմանիայի փառքով արբեցած՝ սիրում է ամեն օր և ամեն տեղ յոխորդանքով երգել իր Deutschland-ի գերազանցութիւնը աշխարհի բոլոր ցեղերի, բոլոր երկրների վրայ, և որի ականջներին չափազանց խորթ են հընչում թոյլերի, տրորուածների ճիչերը։ Տարաբախտաբար Գերմանիայի քաղաքական-հասարակական կեանքին ընթացք, ուղղութիւն տուողները տակաւին սրանք են և ոչ թէ սրտացաւ, բարեմիտ հոգիները։

Եւ ամենօրեայ կեանքը բազմաթիւ մանր ու մեծ փաստերով գալիս է ապացուցանելու բիսմարկեան Գերմանիայի մասին ընդհանրացած մեղադրանքների զէթ խոշոր մասի ճշտութիւնը՝ ցաւալի ու վհատեցուցիչ խոհերի առիթ տալով։ Այդ փաստերը ևս առաւել նշանակալից և ճնշող են դառնում, երբ նրանց մատակարարողը գերմանական ամենաջահիլ սերունդն է, ուսանողութիւնը, այն խենթ հասակը, որ բոլոր ժամանակներում, բոլոր երկրներում միշտ հանդիսացել է առաջապահ գունդ

յաւագոյն գաղափարների, գեղեցիկ զոհաբերութիւնների։ Այժ և շահ, ահա թէ ինչ են փառաբանում նրանք առանց կարմրելու, շատ անգամ կոչումն անելով այս կամ այն ձեռնտու փիլիսոփայական վարդապետութեան իրանց բիրտ գաղափարները պաշտպանելու համար։ Բիսմարկ, Մոլտկէ և Վիլհելմ դարձել են նրանց գերագոյն երրորդութիւնը, որի մասին կարելի է խօսել երկիւղած, անքննադատ պատկառանքով և կամ որի առաջ պէտք է խոնարհուել պաշտամունքի լռութեամբ։

Ես երբէք չեմ կարող մոռանալ մի քանի ընորոշ փաստեր գերմանացի ուսանողների կեանքից։ Շվէյցարական մի պանսիոնում, ուր բազմաթիւ էին նաև գերմանացի ուսանողներ, խօսակցութեան մշտական առարկան, վիճաբանութեան անընպառ նիւթը մարդկային հոգին ղեկավարող բարոյական օրէնքներն էին։ Վէճերը առանձնապէս սուր և աղմկալի էին դառնում սովորաբար փիլիսոփայութեան դասերից յետոյ։ Բարոյագիտական տեսական խնդիրներից իրականութեան և յատկապէս գերմանական իրականութեան անցնելը շատ բնական էր։ Ցիշում եմ, իմ դէմ ու դէմ միշտ նստած էր լինում մի բարձրահասակ, թիկնաւէտ գերմանացի երիտասարդ՝ պարոն Ֆեդրենը։ Բնաւորութեամբ շիտակ, ուղղամիտ իր մասնաւոր յարաբերութիւնների մէջ, միշտ կորրեկտ, աշխատասէր ու տոկուն, քայլուածքով խրոխտ, զինուորականի պէս, այդ ուսանողը գերմանացի երիտասարդի իսկական տիպար էր։ Մասնաւոր խօսակցութիւնների մէջ, գարեջրի սեղանի առաջ նա հիանալի էր, բացսիրտ, ուրախ. բայց երբ մէջ էին ընկնում բարոյական, հասարակական, քաղաքական խոշոր խնդիրներ, երբ մանաւանդ՝ խօսակցութիւնը դառնում էր գերմանական կառավարութեան ընթացքին, Վիլհելմ կայսրի և սուլթանի բարեկամութեանը, Բիսմարկին կայլն, նա դառնում էր անտանելի։ «Ո՛չ մի բարոյական օրէնք, կրկնում էր նա, նրանք բոլորն էլ յարաբերական են ժամանակի և տարածութեան մէջ, հաստատունը և անխախտը սեփական կարողութիւնն է, անհատական գերակշռող յատկութիւնները, այժը. «բնական ընտրողութիւնը» միակ օրէնքն է, որ միշտ կ'իշխի, պատերազմը յաւիտենական է, և յաղթողը միշտ իրաւունք ունի։ Ընկերներից և ոչ մէկը նրան հակառակ չէր։ Մի անգամ պարոն Ֆեդրենը սաստիկ վրդովուած էր անգլիացոց դէմ հարաւ-աֆրիկեան պատերազմի՝ չգիտեմ որ էպիզոդի պատճառով։

—Հապա ձեր Շլեզվիգ-Հոլշտայնը, Ալզաս-Լորրէնը, ասացի նրան։

—Այդ ուրիշ բան է, օհ, իհարկէ, այդ ուրիշ բան է, նը-բանք մերն էին, հին գերմանացիներ, պէտք էր յետ առնել։

—Հապա ձեր կայսրի և ձեր բարեկամութիւնը սուլթա-նի, թիւրքերի հետ, որոնք ձեռնով քաջալերուած՝ կոտորում են քրիստոնեաներին։

Նա մի վայրկեան կարկամեց, ապա գերմանացու կոշտ ֆրանսերէնով և յաղթական տոնով բացագանչեց.

—Il nous faut manger, monsieur!—մենք ուտելու պէտք ունենք, պարո՛ն—և այդ manger (ուտել) բառը նա այնպիսի թափով արտասանեց, որ կարծես պատրաստում էր բան կուլ տալ։ Եւ այդ պարոնը միայն քսան տարեկան էր։

Նոյն պանսիոնում մի օր յայտնուեց մի ուրիշ գերմանա-ցի երիտասարդ, նիհար, հիւանդ, վատոյժ։ Ցետոյ իմացանք, որ նա տառապում էր թոքախտով։ Այդ երիտասարդի արտաքինն այնքան խղճալի էր, որ դժուար էր նրան նայել առանց խո-րին կարեկցութեան. նա միայն արգահատանք էր ներշնչում։ Խօսակցութիւններին, վէճերին նա չէր մասնակցում, լսում էր ուշադրութեամբ, և միայն շրթունքները թեթեակի շարժւում էին, առանց որ մարդ կարողանար մի բան հասկանալ նրա ա-սածից։ Մի երեկոյ տուն վերադառնալով՝ պառաւ տանտիկ-նոջը գտայ սաստիկ վրդովուած։

—Կարո՞ղ էք երևակայել, ասում էր յուզուած ձայնով բա-բի կինը,—ոչ, այդ սարսափելի է, այդ հիւանդ երիտասարդը, որին ամենքս խղճում ենք, մի անսիրտ, անողորմ գազան է. այսօր ձեր բացակայութեանը նա ինչե՞ր ասաց, տէր Աստուած. երևակայեցէք, նա ամենայն հանդարտութեամբ ասում էր, որ թիւրքերը պէտք է մի հատիկ հայ թողած չլինէին աշխարհի վրայ, նրանց պէտք է կոտորել, ապստամբներ են ևայլն ևայ-լն... այդ աստիճան անսի՞րտ, շարունակեց բաբի կինը, նա՝ այդ ողորմելի հիւանդը, որ վաղը միւս օրը պիտի մեռնի։ Ես՝ ինչ ասել կ'ուզի՝ չվրդովուեցի, միայն զարմացայ, որ այդ փըխ-բուն, մաշուած մարմնի մէջ ապրում է մի այդքան բիրտ հո-գի, այդքան մութ խիղճ։

Մի ուրիշ գերմանացի ուսանող հիացմունքով, ոգևորու-թեամբ պատմում էր ինձ, թէ ինչպէս պրուսական կառավա-րութիւնը բոլոր միջոցներով աշխատում է հողագուրկ դարձնել լեհ գիւղացիներին։ Նրան առանձնապէս զբաղեցնում էր լեհա-ցիների երկաթ մազերը. «այդ մազերը զզուելի են, ասում էր նա թունոտ ատելութեամբ. երբ մենք նրանց զինւոր ենք վեր-ցընում, կտրում ենք, նրանք դժգոհ են լինում. վատ են, վատ են լեհացիները»։ Եւ ինչ-որ աւելի տարօրինակ է, նա երեխայի

պէս զարմանում էր, որ ես իրանց վարմունքը համարում էի գարշելի, անպատուաբեր մի մեծ քաղաքակիրթ ազգի։ Ամենից վհատեցուցիչը, ամենից տխուրը այս բոլորի մէջ ըստ իս հէնց այդ «զարմանքն» է, այդ անգիտակից վատութիւնը։

Եւ այսպիսի բազմաթիւ այլ փաստեր կարելի է մէջ բերել։ Համարեա իւրաքանչիւր ոք, որ շփուել է գերմանացիների և մասնաւորապէս ուսանողների հետ, կարող է այս օրինակների շարքն աւելացնել։ Այդպէս է գերմանական շովէն, բուրժուա երիտասարդութիւնը. ինչ որ ասել են Բիսմարկ և Վիլհելմ, նրանք էլ կրկնում են առանց քննադատելու, հակառակ կարծիք լսել անգամ չեն կամենում։ Նրանք նոյնիսկ չեն քաշուի վիրաւորել մէկին, որ համարձակւում է քննադատել իրանց կառավարութեան և մանաւանդ Վիլհելմի գործողութիւնները։ Մի ծանր, յետադէմ շունչ է փչել այս երիտասարդների ճակատների վրայով և խամրել, մեռցրել է ամենագեղեցիկ գաղափարները։ Ֆրանսիացի յայտնի պատմաբան Լավիսս իր ընդհանուր պատմութեան մէջ խօսելով գերմանական նոր կայսրութեան և ֆրանկ-պրուսական պատերազմի մասին ասում է. «Գերմանական կայսրութեան շէնքի ծեփը շաղախուեց ֆրանսիական արիւնով». նա կարող էր աւելացնել՝ «...և գերմանական սրտերով»։ Գերմանական կրոնպրինց Ֆրիդրիխ-Վիլհելմ իր յիշատակարանում 1870 թ. գրում էր.

«Դեկտեմբեր 30, 1870. այսօր կայսրութիւնը և կայսրը անդառնալի կերպով հաստատուած են. այսպէս վերջացաւ վաթսուն և հինգ տարուայ անիշխանութիւնը (interrègne). այսօր առանց կայսր մնացած մի կայսրութեան սոսկալի դատարկութիւնը լցուեց»։ Այս մի քանի տողերը իրանց լակոնականութեամբ ազդու, բովանդակութեամբ նշանակալից՝ չափազանց բնորոշ են. մի «դատարկութիւն» լցուեց Միացեալ Գերմանիայում, բայց մի ուրիշ դատարկութիւն բացուեց, սրտերի դատարկութիւնը, որ տարաբախտաբար իր զարհուրելի հակահարուածն ունեցաւ ամբողջ Եւրոպայում, նոյնիսկ ամբողջ աշխարհում. ազգերի կրծքին կոշմարի պէս ծանրացած միլիտարիզմը, որ ներկայումս լափում է մարդկութեան լաւագոյն ոյժերը, եռանդը, պատմութեան անողորմ տրամաբանութեամբ ծագում է առել նոյն «դատարկութիւնից»։

Ուշադրութեան արժանի երևոյթ է, որ նոյնիսկ այն անձինք, որոնք ամենից աւելի օժանդակել են գերմանական միութեան, կայսրութեան հիմնուելուն, տարիներ յետոյ իրանց ստեղծած գործի առաջ կանգնած՝ տխրութեամբ թափահարել են իրանց ծեր գլուխները և անկարող են եղել ծածկել իրանց

զգացած խորին ցաւը իրերի նոր կացութեան առաջ։ Դրսից հզօր ու փառաւոր այդ կայսրութիւնը ներքուստ չի համապատասխանել նրանց փայփայած յոյսերին, նրանց վարդագոյն երազներին։ Գերմանիայի միութեան հետ այլ իդէալներ էին կապուած՝ քան ինչոր իրականացան։ Այսպէս՝ պատմաբան Տրէյչիկէն, որ իր «XIX դարի Գերմանիայի պատմութեամբ» և առհասարակ իր քաղաքական պրոպագանդայով այնքան օժանդակել էր միութեան գաղափարի իրագործման, 1895 թւի յուլիսի 19-ին Բերլինի համալսարանում մի հայրենասիրական ճառ արտասանեց, որ ահագին աղմուկ հանեց Գերմանիայում։

«Մեր բարքերում ամեն ինչ դարձել է աւելի բիրտ, և՛ քաղաքականութիւնը, և՛ կեանքը,—ասաց Տրէյչիկէ...—Եթէ քաղաքականութիւնը աւելի բիրտ է դարձել, նրա պատճառը փնդրելու է մեր հասարակական կեանքի անհանգստացնող փոփոխութեան մէջ։ Շատ բան, որ մենք մի ժամանակ համարում էինք հռոմէական կայսրութեան անկման արդիւնք միայն, իրօք քաղաքների ինտենսիւ կուլտուրայի հետևանք է, որ այժմ մեզ էլ է հեղեղում, ինչպէս մի ժամանակ հռոմայեցիներին... պատկառանքը, որ Գէոթէն անուանում էր ամեն մի բարոյական դաստիարակութեան վերջին նպատակ, նոր սերնդից հեռանում է սարսափելի արագութեամբ։ Անհետանում է Աստուծոյ երկիւղը, երկու սեռերի մէջ բնութեան և հասարակութեան դրած սահմանների յարգանքը, հայրենիքի սէրը, որ օր-աւուր մաշւում է վայելքների միայն հետամուտ մարդկութեան ֆանտոմի առաջ։ Քանի կուլտուրան տարածւում է, այնքան աւելի նա դառնում է տափակ։ Արհամարհում են դասական աշխարհի խորութիւնը և գնահատում են այն, ինչ ծառայում է մօտիկ, անմիջական շահերին։ Այսօր, երբ իւրաքանչիւրը խօսում է իր լրագրի և իր խօսակցութեան բառարանի լեզուով, հազւագիւտ է դարձել ստեղծագործող ոգու զօրութիւնը և սեփական տգիտութիւնը խոստովանելու քաջութիւնը... Գիտութիւնը, որ մի օր պրպտում էր այնքան խորերը անհունին հասնելու համար, այսօր փուում է մակերևոյթապէս միայն... Ջանձրալի կեանքի դադարկութիւնը մի կերպ լցնելու համար ձիարշաւների գրաղները դառնում են առաջնակարգ կարևորութիւն ունեցող երևոյթներ, և երբ տեսնում ենք ցիրկերի հերոսների և խեղկատակների վայելած յարգանքը, մենք նողկանքով մտածում ենք Կարակալլայի պալատի հրէշաւոր, բայց և թանկագին քսանևութ մրցողների մասին։ Այս բոլորը ժամանակի լուրջ նշան է» *)։

---

*) A. Guilland։ «L'Allemagne nouvelle».

Գերմանական ժամանակակից սերնդի այս պատկերը գըծագրուած մի յայտնի, խոշոր տաղանդի տէր, հայրենասէր և իմպերիալիստ գերմանացու ձեռքով չափազանց պերճախօս է, որպէսզի պէտք լինի նոր օրինակներով ու քաղուածներով խըտացնել գոյները։ Եւ սակայն իդէպ է այստեղ յիշել, սա այն Տրէյչիկէն է, որ տարիներ առաջ հնարաւոր էր համարել գրել հետևեալ տողերը. «Մի լաւ պաշտօնեայ աւելի անհրաժեշտ է պետութեանը, քան թէ մի բանաստեղծ»։ Սա կարող է ճշմարիտ լինել, բայց մի պայմանով, որ Տրէյչիկէները իրանց կեանքի վերջալուսին տխրութեամբ կրկնեն, թէ ամեն բան դարձել է կոպիտ, մակերևոյթական ու տափակ։ Առանց բանաստեղծութեան կեանքն անապատ է։

*
* *

Գերմանիայի կեանքը անցեալ XIX դարի ընթացքում սակաւ աղմկալի չեղաւ. նախ Նապոլէոն I իր ջախջախիչ գընդերով, ապա բեստաւրացիան, յետոյ քառասուն ութ թւի յեղափոխութիւնը և վերջապէս Բիսմարկեան պատերազմների ամբողջ շարքը, որ հեռաւոր և մօտիկ անցեալի երկունքի լուծումն էր։ Եւ բոլոր այս քաղաքական խոշոր ցնցումների, արտաքին և ներքին կռիւների տակ կատարւում էր մի աշխատանք՝ դանդաղ ու հաստատ։ Արտաքին պայմանների ազդեցութեան տակ կամաց-կամաց հասունանում էր մի գաղափար, մեծ, միացեալ Գերմանիայի գաղափարը, որ Նապոլէոնի սարսափելի հարուածից յետոյ անշուշտ պիտի կարողանար գոհացումն տալ բոլոր վիրաւոր հոգիներին, ազգային փառքի ծարաւ սըրտերին։ Ամբողջ կէս դար այդ գաղափարի իրագործման համար աշխատում էին բոլոր նրանք, որոնք իրանց պատմութեան գիտակցութիւնն ունէին և պատմական ճակատագրի արժէքն էին ըմբռնում. փիլիսոփայութիւն և պատմութիւն, բանաստեղծութիւն ու վիպագրութիւն հաւասար եռանդով աջակցեցին իրար՝ պատրաստելու համար այն, ինչ-որ եղաւ։ Ցամաս, տենդոտ ու լայնածաւալ այդ աշխատանքի մէջ բազմաթիւ չափազանցութիւններ, անարդար ընդհանրացումներ, փութկոտ դատավճիռներ, անհիմն մեղադրանքներ, ինչպէս և ազգային փքուն մեծամտութեան օժանդակիչ քարոզներ անխուսափելի եղան։ Մեծ գաղափարը՝ Գերմանիայի միութիւնը իրագործուեց, բայց իր հետ կապուած պահեց այնպիսի բարքեր, այնպիսի բարոյական հասկացողութիւններ, արդիւնք կէս դար կատարուած պրոպագանդայի, որոնց համար իւրաքանչիւր ազնուասիրտ, ուղղամիտ,

նախապաշարմունքներից ազատ գերմանացի այսօր չի կարողանում առանց խորին ցաւի մտածել։ Քիչ առաջ տեսանք Տրէյչիկէի արտասանած հրապարակական մեղադրանքը. և նա մենակ չէ։ Արդարացու Ըրնանի մի գեղեցիկ նամակի հետևեալ խօսքերը՝ ուղղուած իր բարեկամ Դաւիթ Շտրաուսին, որ նոյնպէս յաղթանակի արբեցութեան մէջ դարձել էր ոյժի երկրպագու. «Ծայրայեղութիւնը վատ բան է, գրում էր Ըրնան, գոռոզութիւնը միակ ախտն է, որ պատժւում է այս աշխարհում» *)։

Գերմանիայում իշխող «ծայրայեղութիւնների», չպարտակուող «գոռոզութեան», մեծամտութեան, թոյլերի վերաբերմամբ արդարութեան ամենատարրական գաղափարի մոռացութեան մէջ անշուշտ ազգային պատմագրութիւնն էլ իր խոշոր բաժինն ունի։ Դաստիարակչական տեսակէտից պատմութեան դերը ահագին է, ոչինչ այնքան չի գուրգուրում մանուկ սերընդի երևակայութիւնը, այնպէս չի փայփայում նրա այս հետաքրքրութիւնը, որքան խոշոր պատմական դէմքերը և նշանաւոր արկածները։ Պատմութեան դիտաւորեալ, կանխակալ ուսուցումը այս կամ այն ուղղութեամբ ընդունակ է մանուկ հոգիները խեղաթիւրել շատ անգամ անդառնալի կերպով։ Անշուշտ՝ ծայրայեղ անարդարութիւն կը լինէր պնդել, թէ XIX դարի գերմանական խոշոր պատմաբանները, որոնք մեծամեծ ծառայութիւններ մատուցին գիտութեանը իրանց մեթոդով, ուսումնասիրութիւններով, իրանց անգնահատելի հմտութիւններով, բոլորն էլ դիտաւորեալ ձևով աղաւաղել են պատմութիւնը կամ հանել են անճիշտ եզրակացութիւններ մօտաւոր, գործնական նպատակների համար։ Բայց նոյնքան անարդարութիւն չի լինի ասել, որ նրանք՝ այդ պատմաբանները, հակառակ նոյնիսկ իրանց կամքի՝ անկարող պիտի լինէին կտրուել իրանց միջավայրից, բարձրանալ ընթացիկ կեանքից վեր, մոռացութեան տալ ժամանակակից պայմանները, իրանց շատ անգամ գուցէ իրաւացի անձնական համակրութիւններն ու հակակրութիւնները և անցեալը ներկայացնել միանգամայն օբիեկտիւ եղանակով։ Անհատի հոգեկան, բարոյական կապերը իր միջավայրի հետ միշտ չափազանց խորն են և հաստատ, որպէսզի հնարաւոր լինէր մի այդպիսի աբստրակցիա։ Արտաքին պայմանները, ժամանակակից պահանջները, մթնոլորտի մէջ խաղացող գաղափարները, ձգտումները, որոնք ծնունդ են առնում յայտնի ընդհանրութիւնից, յայտնի էպոխայում, նման են վարարած գետի յորձանքներին, որոնցից խուսափելը շատ անգամ անկարե-

*) Renan։ «La reforme intellectuelle et morale».

լի է։ Ուշադրութեան արժանի մի հանգամանք է, որ անցեալ դարի առաջին կէսը մեծ խժորումների, խոշոր երազների ու յոյսերի մի վերին աստիճանի կրիտիկական անհանգիստ շրջան եղաւ Գերմանիայի համար։ Նա մտածում էր, պատրաստւում էր Նապոլէոն I-ի տուած դառն դասը ապագայում անկարելի դարձնել։ Ոչ ոք չէր կարող և անհնարին էր աչք փակել այդ վճռական ժամանակի վրայ. պատմաբանները չէին, որ պիտի կարողանային դուրս մնալ ընդհանուր հոսանքից։

Անցնենք այժմ բուն նիւթին՝ գերմանական պատմագրութեանը և նրա խաղացած դերին, որ սոյն յօդուածի անմիջական և գլխաւոր նպատակն է կազմում։

*
* *

Անցեալ դարի սկիզբը և յատկապէս 1806 թ. Գերմանիայի դժբախտութեան և նրա ապագայ փառքի սկզբնաւորութեան տարին եղաւ։ Այդ նշանակալից թւականին Ենայի պատերի տակ Նապոլէոնի գնդերը զարհուրելի կերպով ջախջախեցին Պրուսիան, գերմանական միակ պետութիւնը, որ համարձակուել էր սուր վերցնել գոռող աշխարհակալի դէմ։ «Պրուսիան վերջացաւ, գրում էր Սուլթանին Նապոլէոնը Ենայի ճակատամարտի յաջորդ օրը, Եւրոպայի քարտէզից նա ջնջուեց»։ Եւ այդ «ջնջուած» Պրուսիան էր, որ մօտ կէս դար յետոյ՝ իր ոտների տակ դրեց մի ուրիշ Նապոլէոնի (III) Սեդանում. պատմութեան դասերը զարհուրելի են։ Ըմբռնելու համար 1806—1871 (Ենայից—Սեդան) շրջանում զարգացած մտաւոր հոսանքի բոլոր արժէքն ու մեծութիւնը Գերմանիայում՝ անհրաժեշտ է մի ակնարկ ձգել գերմանական պատմութեան փիլիսոփայութեան վրայ մինչև Ենայի ճակատամարտը, մինչև այն զարհուրելի մրրիկը, որ աւերածով զարկուեց գերմանացիների վրայ։ Պատմագրութիւնը այդ ժամանակում՝ համակուած էնցիկլոպեդիստների վարդապետութիւններով՝ գերազանցօրէն կոսմոպոլիտ է։ Հայրենիքի և ազգութեան գաղափարը դուրս է մղուած պատմութեան փիլիսոփայութիւնից և նրա տեղ բռնել է մարդկութեան սէրը, տիեզերական մարդկութեան, որ գերմանացին երազում է ապրող, համարեա եթերային ձևով։

«Նոր Գերմանիայի նոյնիսկ հիմնադիրներից շատերը ազգային զգացմունքը նկատում էին որպէս հոմանիշ բանականութեան հակառակ նախապաշարմունքների։ Լեսսինգը խոստովանում էր, որ ինքը չի հասկանում, թէ ինչ է նշանակում հայրենասիրութիւն, ազգային զգացմունք. «Հայրենիքի սէր ես չեմ

հասկանում, ասում էր նա, այդ զգացմունքի մասին եթէ լաւ լեզու գործածելու լինինք, պէտք է ասենք, որ դա մի հերոսական թուլութիւն է։ Ես խիստ երջանիկ եմ, որ այդ թուլութիւնից ազատ եմ»։ Գէոթէն և Հեգելը հայրենասիրական զգացմունքից բոլորովին զուրկ էին. տիեզերքի և մարդկութեան տեսական կուլտը նրանց համար ամեն ինչ էր։ Շիլլերն ասում էր, թէ հայրենասիրական զգացմունքը կարող էր որևէ արժէք և նշանակութիւն ունենալ ժողովուրդների պատմութեան նախնական շրջանում, աշխարհի մանուկ ժամանակ։ Բայց այժմ, քաղաքակրթութեան այս աստիճանում լուրջ մարդիկ որևէ ազգի վրայ առանձին ուշադրութիւն դարձնել կարող են միմիայն այն դէպքում, երբ այդ ազգի ճակատագիրը որևէ ազդեցութիւն ունի մարդկային տեսակի վրայ» *)։

Բայց ամենից հետաքրքիրը և բնորոշը Ֆիխտէի կարծիքն է հայրենիքի և ազգութեան մասին Ենայի ճակատամարտից առաջ, այն Ֆիխտէի, որ պատմական այդ խոշոր անցքից ամիսներ միայն յետոյ գերմանական ազգին ուղղած իր կրակոտ կոչերով այնպիսի խորը ցնցումն առաջ բերեց ժողովրդի բոլոր խաւերում և օժանդակիչ հանդիսացաւ ազգային զգացմունքի, մեծամտութեան անօրինակ զարգացման։

«Ո՞րն է, հարցնում եմ ես, բացագանչում էր Ֆիխտէ, իսկապէս քաղաքակիրթ և քրիստոնեայ եւրոպացու հայրենիքը։ Ընդհանուր առմամբ՝ դա Եւրոպան է, իսկ մասնաւորապէս՝ այն երկիրն է, որ քաղաքակրթական սանդուխքի վրայ բռնած ունի ամենաբարձր աստիճանը։ Այն պետութիւնը, որ մի ճակատագրական սխալ է գործում, իհարկէ, կ'ընկնի ժամանակի ընթացքում և կը դադարի գրաւել նոյն տեղը։ Բայց թէև նա ընկնում է - և պէտք է ընկնէր անհրաժեշտապէս,—ուրիշները հէնց այդ պատճառով բարձրանում են, և սրանց մէջ յատկապէս մէկը, որ բռնում է առաջինի բռնած տեղը։ Թողնենք ուրեմն նրանց, որոնք ծնուած են երկրից և որոնք իրանց հայրենիքը փնտրում են հողի, գետերի և լեռների մէջ, թողնենք նրանց մնալ քաղաքացիներ ընկած պետութեան։ Նրանք պահպանում են, ինչ-որ սիրում են և ինչ-որ կազմում է նրանց իսկական երջանկութիւնը։ Մարդկային հոգին նման արեգակին, հնաղանդուելով մի անդիմադրելի ձգողականութեան, կը նետուի միշտ դէպի լոյս և ազատութիւն։ Հոգու այսպիսի կոսմոպոլիտ կազմութիւնը մեզ հնարաւորութիւն է տալիս մի կատարեալ անդրդրութեամբ դիտել ազգերի գործերը և նրանց

*) R. Flint։ «La philosophie de l'histoire en Allemagne».

ճակատագիրը, թէ մեզ և թէ մեր յետնորդների համար և այն մինչև յաւիտեան» *)։ Եւ այս բոլորը Ֆիխտէն գրում էր Ենայի ճակատամարտից միայն մի քանի ամիս առաջ, իսկ 1807 թուին, ուրեմն այդ նշանակալից պատմական անցքից ընդամենը մի քանի ամիս յետոյ, երբ. Պրուսիան արիւնաթաթաւ փըռուած էր գետին, նա արտասանում է իր նշանաւոր ճառերը, **) որոնց մասին կը տեսնենք իր տեղում։ Պակաս կոսմոպոլիտ և դէպի իր հայրենիքի ճակատագիրը անտարբեր չէր նաև Ֆիխտէի նշանաւոր աշակերտ՝ Շելլինգ։ Վերջինս փիլիսոփայական կատարեալ անդորրութեամբ գրում էր իր աշակերտ և բարեկամ Հանրի Ստեֆենսին. «Ի՞նչ հարկաւոր է նետուել այս աշխարհի աղմուկների մէջ. ի՞նչ օգուտ կ'առաջանայ դրանից. մի՞թէ տեղը չէ ասելու, որ մեր թագաւորութիւնը այս աշխարհում չէ»։

Գերմանիայում XVIII դարի վերջում հիւմանիտեր և կոսմոպոլիտ դաղափարների իրական զարգացմանը քիչ չնպաստեց նաև Հերդերի նշանաւոր աշխատութիւնը, որ պատմութեան փիլիսոփայութեան առաջին լուրջ գործն եղաւ ***)։ Հերդեր իր հայեացքների եթէ ոչ խորութեամբ, դէթ լայնութեամբ, իր մտքերի համամարդկային թռիչքով, իր լեզուի ճոխութեամբ, ոճի անկեղծութեամբ, իր մեծ սրտի ջերմութեամբ ժամանակակից սերնդի վրայ անշուշտ ահագին ազդեցութիւն ունեցաւ։ Պատմութեան ամբողջութիւնը նրան ներկայանում է որպէս մարդկութեան և մարդու երջանկութեան ու կատարելութեան յաջորդական մի հանդէս։ Մարդկային բնութեան վերջին նպատակը Հերդերի համար մարդկութիւնն է։ Եւ պատմութեան բոլոր փաստերը, դարերի ընթացքում տեղի ունեցած անթիւ յեղյեղումները նա բացատրում է այդ մի հատիկ նպատակով։ Գերազանցօրէն հումանիստ, նա խօսք չի գտնում խարազանելու մեծամեծ աշխարհակալութիւնները և մանաւորապէս ծանրանում է հռոմէական պատմութեան վրայ, որ նա համարում է յափշտակութեան, կողոպուտի, աւերածի մի պատմութիւն։ Ցեղարիզմը նրա համար խոտելի է, և նա դարշանքով երես է դարձնում սրածութիւններից՝ մտքի աստուածային արտադրութիւնների՝ գեղարուեստի, գիտութեան վրայ իր հայեացքը հանգստացնելու համար։ Դասական աշխարհը նրա համար Ցունաստանն է, ուր միտքը և իդէան իշխեցին, և ոչ Հռոմը, որ եկաւ իր երկաթէ ոտների տակ տրորելու ժողովուրդներին։

*) *Fichte*։ «*Les Caracteristiques de l'âge présent*».
**) *Discours à la nation allemande*.
***) *Herder*: «*Idées sur une philosophie de l'histoire de l'humanitê*».

Հերդերի պատմութեան փիլիսոփայութիւնը վաղուց է արդէն համարուում անբաւարար և հնացած հայեացքներով ծանրաբեռնուած. բայց մի բան, որ նրանից խլել անկարելի է, այդ նրա տիեզերականութիւնն է, մարդու և նրա ճակատագրի մասին ունեցած թէև միակողմանի, բայց լայն ըմբռնումն է. նրա փիլիսոփայութեան մէջ այնպէս շեշտուած են այս բոլորը, որ յետագայ տարիներում գտնում էին, թէ Հերդերի պատմութիւնը վնասակար եղաւ գերմանացիներին՝ զարգացնելով նրանց մէջ աշխարհաքաղաքացիական զգացմունքը միակողմանի ձևով մինչև այն աստիճան, որ մայր հայրենիքը մոռացութեան տրուեց։ Այս մեղադրանքը գուցէ այնքան էլ զուրկ չէ հիմունքից, եթէ աչքի առաջ ունենանք Հերդերի կոսմօպոլիտիզմը և մանաւանդ նրա հայեացքը հայրենասիրութեան զգացմունքի մասին։ «Դա մի զարհուրելի բան է, ասում է նա, հակաբնական մի կիրք, մի տեսակ բարբարոսութիւն, անարժան որևէ քաղաքակիրթ ժողովրդի» *)։

Միևնոյն ժամանակ Կանտ իր սքանչելի հանճարի զարմանալի արտադրութիւններով ահագին մղումն տուեց զուտ գիտական ոգուն՝ փիլիսոփայական մտքերի առաջ բանալով ուսումնասիրութիւնների, բարձր սպեկուլացիաների լայն ասպարէզ։ Երիտասարդ սերունդը մեծ ուսուցչի յետևից նետուեց այդ ասպարէզը, և մարդկային բանականութիւնը, նրա կարողութեան պայմանները և սահմանները դարձան ժամանակակից ու խորին ուսումնասիրութեան իդէալական առարկաներ։ Այս բոլորի մէջ տեղ չունէին զուտ գործնական մոտիւներ, վուլ՝գեր իրականութեան, ընթացիկ կեանքի ամեն օր մատակարարած խնդիրներ, սահմանափակ, նեղ բնաւորութիւն ունեցող հարցեր։ Գերազանցօրէն իշխողը կանտեան զուտ բանականութիւնն էր (la raison pure), մարդկային բնութիւնը, հոգեկան կարողութիւնները։ Ահա թէ ինչու այնքան մեծ է Կանտին անմիջապէս յաջորդող փիլիսոփայութեան մէջ իդէալիզմը։ Եւ XVIII դարի բոլոր դասական գրողները համարեա կոսմօպոլիտ են։ Այդ հասկանալի է, եթէ ի նկատի ունենանք փիլիսո-

---

*) «Ես ընդունում եմ, որ Հերդերի տիեզերականութիւնը անկատար է և արտայայտում է իրերի միայն մի կողմը, բայց անշուշտ միևնոյն մեղադրանքը կարելի է ուղղել նաև ազգայնականութեան կամ հայրենասիրութեանը... այս երկու հասկացողութիւնները (կոսմօպոլիտիզմ և հայրենասիրութիւն) իրար հակառակ չեն, նրանք լրացնում են միմեանց։ Մի գերմանացի, որ խորապէս ներշնչուած չէ տիեզերական գաղափարներով, նա մի տխուր նմուշ է իր ազգութեան»։

Flint։ «*La philisophie de l'histoire en Allemagne*».

փայլութեան ահագին ազդեցութիւնը ժամանակակից սերունդ-ների վրայ և մանաւանդ՝ գերմանական մտքի բնատուր յատ-կութիւնը՝ տարուել տեսական բարձր խնդիրներով՝ զուտ գի-տական, յամառ, տոկուն, հետևողական հետազօտութիւններով։

Անգամ Նապոլէոնի վերաբերմամբ այդ սերնդի գաղա-փարները բոլորովին ազատ են ազգային գոյնից։ Հեգել նրան համարում էր «աշխարհի ոգին», պատմաբան Ժան Միւլլերը «ժամանակակից դարի հերոս»։ Գէոթէն լի հիացմունքով դէպի Նապոլէոնը, հետևեալ խօսքերով էր դիմում հայրենասէր գեր-մանացիներին, որոնք նոր էին սկսում իրար գալ. «Ցնցեցէք ձեր շղթաները, որքան կամենաք, փշրել չէք կարող և միայն աւելի խորը կը թաղէք ձեր մսերի մէջ. այս մարդը (Նապո-լէոն) շատ է հզօր ձեզ համար»։ Դէոլինգեր ասում է. «Իմ և իմ ընկերների մի իդէալ ունենալու պահանջը մեր էութեան մի մասն էր, և ես յիշում եմ, թէ Նապոլէոն որպիսի հիաց-մունքի առարկայ եղաւ մեզ համար, թէև նա բնաւ արժանի չէր մի այդպիսի յափշտակութեան մեր կողմից»։ Բազմաթիւ էին Նապոլէոնի պաշտողները նաև գերմանական գիւղերում։ Պատմաբան Բանկէն մի օր պատահեց մի գիւղական ուսուցչի, որ սիրում էր Նապոլէոնին՝ որպէս մարդկութեան մի հերոսի և որին նա յատկացրել էր նախախնամական մի առաքելու-թիւն *)։

Ահա այսպէս էր մօտաւորապէս գերմանական մտածող սերունդը Ենայի ճակատամարտից առաջ, և ահա թէ ինչ ոգի էր իշխում, առաջնորդում նրա միտքը նաև պատմութեան փի-լիսոփայութեան շրջանում։

*
* *

Ենայի ճակատամարտը Գերմանիայի համար եղաւ այն զուլումը, որ վառեց նրա հոգին և բիրտ, ա-նողորմ իրականութեան, ցաւոտ, անխուսափելի անհրաժեշտու-թեան հանդէպ նրան ոտքի հանեց։ Դժուար է համառօտ տողե-րով պատկերացնել այն, ինչ կատարուեց Գերմանիայում այդ ճակատամարտից յետոյ, այն աստիճանի բազմակողմանի, լայ-նատարած և հզօր էր օտար, անկոչ բռնութեան դէմ սկսուած հոսանքը։ Թւում է թէ այդ արիւնոտ ու դժբախտ օրից յետոյ իւրաքանչիւր գերմանացի ոտքի ելած և թէև կամաց-կամաց, բայց հաստատ քայլերով գնում էր դէպի Սեդան։ Ամբողջ կէս

*) A. Guilland. «L'Allmagne nouvelle».

դար հարկաւոր եղաւ Ենայից Սեղան հասնելու համար, բայց Գերմանիան վերջիվերջոյ հասաւ։ Եւ այդ ժողովուրդը իր վերածնութեան ընթացքում ունեցաւ իր մտաւոր առաջնորդները, որոնց մէջ փիլիսոփաները և պատմաբանները յետին տեղը չեն բռնում։

Մենք տեսանք, թէ ինչ էր մտածում Ֆիխտէն հայրենիքի և հայրենասիրական զգացմունքի մասին Ենայի ճակատամարտից քիչ առաջ, այժմ տեսնենք, թէ նա ինչ է ասում նոյն ճակատամարտից ամիսներ միայն յետոյ 1807 թ.ին։ Ֆիխտէն պնդում է այդ ժամանակ, թէ կայ մի ժողովուրդ, որից ամբողջապէս կախուած է գիտութիւնը և իրական քաղաքականութեան յառաջադիմութիւնը։ Նրա կործանումը առաջ կը բերի մարդկութեան բոլոր յոյսերի և բոլոր շահերի աւերած։ Այդ ազգը գերմանական ազգն է։ Գերմանական ժողովուրդը՝ շարունակում է Ֆիխտէ, միակն է, որ պահպանուել է մաքուր և անխառն։ Միայն նա է պահպանում մի ինքնատիպ հանճար, ծածկում է իր կրծքում կեանքի և հոգևոր կարողութեան անըսպառ աղբիւրներ։ Ֆրանսիացիք, ինչպէս և լատինական այլ ժողովուրդներ, հասած լինելով ժամանակից առաջ զարգացման և հասունութեան շնորհիւ անդադար ժղումների, միևնոյն ժամանակ լինելով զանազան ցեղերի խառնուրդ, այժմ արդէն ուժասպառ են և ամուլ *)։ Այսպէս է պատմութեան դասը. նրա դառնութեան շնորհիւ հայրենիք չճանաչող, կոսմոպոլիտ, ծայրայեղ իդէալիստ Ֆիխտէն երեք տարում դարձաւ ծայրայեղ հայրենասէր, ազգայնական, շովինիստ և օտարատեաց։ Բայց նա փիլիսոփա է, իսկ փիլիսոփայութիւնը գերազանցապէս կապուած է տրամաբանութեան հետ, ուստի հարկաւոր էր «Caracteristiques de l'âge présent»-ի և իր նոր «ճառերի» մէջ հակասութիւնը հարթել։ Ֆիխտէի համար այդ դժուար չէ, նա այժմ կ'ասի, թէ այն ընտրեալ, եզակի երկիրը, որ բոլոր քաղաքակիրթ մարդկութեան հայրենիք պէտք է նկատել, Գերմանիան է, և ոչ թէ Ֆրանսիան, որ լատինական ցեղերը յոգնել են և ամուլ կտրել, որ քաղաքակրթութեան և գիտութեան ապագան բացառապէս կախուած է Գերմանիայի և ոչ Ֆրանսիայի ճակատագրից։ Եւ այդ ասողը Ֆիխտէն է, իդէալիստ փիլիսոփան, Կանտի աշակերտը, ահագին հեղինակութեան տէր. հասկանալի է, թէ որքան մեծ եղաւ նրա «ճառերի» ազդեցութիւնն ամբողջ Գերմանիայում, և թէ մինչև որ աստիճան գերմանական ժողովրդին յատկացրած քաղաքակրթական դերը շո-

*) *Fichte. «Discours à la nation allemande».*

ցեց ինքնասիրութիւններ և հիմունք դարձաւ դէպի օտարները և մանաւորապէս դէպի Ֆրանսիան տածած ատելութեան։

Սկսուած շարժման գլուխ անցաւ Պրուսիան, և գործը պատրաստուեց յատկապէս մտաւոր հողի վրայ։ Բարոն Շտէյնը, այս ֆանատիկ հայրենասէրը, որ գերմանական միութիւնը գլուխ բերող ամենախոշոր դէմքերից մէկն է, առաջինը հասկացաւ, թէ այդ մեծ գործի՝ հայրենիքի վերածնութեան համար անհրաժեշտ է ժողովրդի պարտքի գիտակցութիւնը զարգացնել, անձնազոհութեան և հայրենասիրութեան զգացմունքը զարթեցնել։ Նրա կարծիքով միայն Պրուսիան «իր առաքինութիւններով և իր հաստատութիւնների գերազանցութիւնով» կարող էր նմուշ ծառայել գերմանական ժողովուրդների համար և դառնալ նրանց միութեան իսկական կենտրոն։ Աւստրիական Հաբսբուրգեան տունը նրա համար ժեզուիտական էր, մինչդեռ Պրուսիայի Հոհենցոլերները կարողանում են իրանց երկրներում զարգացնել «ազատութեան և ճշմարտութեան ոգին, որ չի խեղդւում սոփեստութիւններով»։ Մի ուրիշ անգամ նա գրում էր, թէ «պրուսական հինաւուրց աբսոլիտիզմը, որ անցեալում այդ երկրի մեծութիւնը ստեղծեց, կարող է նոյնն անել այժմ և ապագայում»։ Նրա ատելութիւնն այնքան մեծ էր դէպի ֆրանսիական յեղափոխութիւնը և դէպի նրա ոգին, որ նա իր այդ զգացմունքը տարածում էր նոյնիսկ բոլոր նրանց վրայ, որոնք մասնակից էին եղել այդ գործին։

Եւ Շտէյնը մենակ չէր. ուրիշ շատերը, պատմաբաններ և հրապարակախօսներ, միևնոյն ձգտումների, միևնոյն գաղափարների տէր մարդիկ՝ հանդէս եկան որոշ ուղղութեամբ և ոգով դաստիարակելու գերմանական նոր սերունդը։ Այդ մարդիկն էին, որ 1819 թւին բարոն Շտէյնի ղեկավարութեամբ կազմեցին մի մեծ ընկերակցութիւն, որ գերմանական պատմագրութեան օրօրան եղաւ, ասում է Ա. Գիյան։ Այդ ընկերութեան մէջ մտան այնպիսի յայտնի անձինք, ինչպէս Դահլման, Ներուբ, Գրիմմ եղբայրները, Սավինիի, Շլեգել, Շլոսսեր և ուրիշ շատերը։ «Պրուսական հաստատութիւնների համար հիացմունք, ատելութիւն դէպի ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը, քաղաքական այս երկու գաղափարները դարձան սեփականութիւն բոլոր ազգային պատմագիրների։ Իրաւաբանական պատմական դպրոցից հանուած պատմութեան փիլիսոփայութեան անունով՝ նրանք աշխատում են հաստատել երկու բան—ֆրանսիական յեղափոխութեան մանկութիւնը և Գերմանիայի պատմական զարգացումը Պրուսիայի հիմքերի վրայ» *)։

*) A. Gilland: «L' Allemagne nouvelle».

Շատ անգամ է ասուել, որ Գերմանիան իր մեծամեծ յաջողութիւններով պարտական է գիւղական դպրոցին։ Դա ճըշմարիտ է, բայց պէտք է աւելացնել և զօրանոցը։ Դպրոցում իշխող ոգին յաջորդաբար անցաւ զօրանոցը և այդ երկուորեակները պատրաստեցին Պրուսիայի մեծութիւնը։ Ֆրիդրիխ Վիլհելմ III 1813 թ-ին հիմնեց Բերլինի համալսարանը։ Սահմանափակ ընդունակութիւնների տէր այս թագաւորը իր ժամանակին ունեցաւ սակայն մի խելացի միտք, նա հասկացաւ, որ քաղաքականապէս, զինուորապէս թուլացած իր պետութիւնը պէտք է զօրացնել մտաւոր ոյժերով, ժողովրդի գիտակցութիւնը բարձրացնելով։ Հուսրոլ'դ, որ այդ համալսարանի ղեկավարութիւնը ստանձնեց, հրաւիրեց Գերմանիայի առաջնակարգ գիտնականներին։ Այնտեղ խմբուեցին պատմաբան Նեբուր, աստուածաբան Շլէյմախեր, իրաւագէտ Սավինիի և լեզուաբան Բէոքլէ։ Վերջում եկաւ նաև ինքը Հեգել, այդ ժամանակի մեծագոյն փիլիսոփան, որ նկատւում էր, որպէս մտքի իշխան։ Այս նշանաւոր անձինք իրանց ուրոյն-ուրոյն հայեացքների տակ՝ բերեցին սակայն մի ընդհանուր, հիմնական գաղափար—Գերմանիայի վերածնութիւնը։

Պատմութեան և իրերի վրայ համամարդկային, տիեզերական տեսակէտից նայող Կանտի և Գէոթէի Գերմանիան էլ չկար, տրորուած, ընկճուած, անարգուած, մի գոռող յաղթողի ոտների տակից բարձրացած՝ նա թողնում էր իր գեղեցիկ, մեծահոգի երազներն ու խոհերը, ոտքի էր կանգնում և ինքնապաշտպանութեան բնազդից մղուած, նուիրագործում էր ոյժի պաշտամունքը և ազգային եսասիրութիւնը։ Պրուսիան, գերմանական ամենից աւելի պատժուած երկիրը այժմ ձգտում, լայնանում էր և պատում մնացած Գերմանիան իր դրական և քննադատական խիստ ոգով։ Նիւթական, առարկայական միութիւնից առաջ դանդաղութեամբ զարգանում էր բարոյական միութիւնը գերմանական զատ-զատ երկիրների մէջ, և կենտրոնը, ուղղութիւն և ընթացք տուողը պրուսական ոգին էր, որ կոմս Մոլտկէն մի տեղ արտայայտել է զինուորական խստասրտութեամբ և պրուսական պաղարիւնութեամբ հետևեալ նշանակալից խօսքերի մէջ. «Փառք Աստուծոյ, ասում է Մոլտկէ, որ չնայելով յառաջադիմութեանը, այնուամենայնիւ Պրուսիայում դեռ պահպանւում է այնքան անգամ քամահրուած քաղաքական հնադարեան բեժիմը, այն հին թէորիան, որ թոյլ է տալիս մարդկանց երջանիկ դարձնել հակառակ իրանց ցանկութեանց։

Թէ մինչև որ աստիճան պրուսական ոգին ատելութիւն էր տարածում գերմանացիների մէջ դէպի Ֆրանսիան և

այն բոլորն՝ ինչ ֆրանսիական է, ապացուցանում են հետևեալ բնորոշ փաստերը. պատմաբան Մենցելը գտնում էր, որ հարկաւոր է «ֆրանսիական արեան մէջ լուանալ Լուդովիկոս XVI-ի և Նապոլէոնի գերմանացիներին հասցրած անարգանքը»։ Տրէյչիկէն գտնում էր, որ «Ֆրանսիայի հետ դեռ մի հաշիւ կայ մաքրելու»։ Գեներալ Բոսմը գրում էր 1870 թ. պատերազմը յայտարարելու առիթով. «Որպիսի երջանկութիւն! ինչ որ յոյս ունէինք մեր ամբողջ երիտասարդութեան շրջանում, վերջապէս կատարուեց... գալլո-ֆրանկներից մեր վրէժխնդրութիւնը երկու հարիւր տարի յետոյ... Այո, խոստովանում եմ, որ ես կը զոհէի մի կամ մի քանիսը իմ զաւակներից այս մեծ գործի համար—երկու հարիւր տարուց ի վեր մեր կրած բոլոր անարգանքները մաքրելու համար։ Թէ մինչև որ աստիճան խորն է գերմանական քինախնդրութիւնը, ապացուցանում է արդէն յիշուած պատմաբան Մենցելի հետևեալ տողերը. «Հռոմի մեռնող գլադիատորը պէտք է հայրենասիրական զայրոյթով լցնի իւրաքանչիւր գերմանացի տուրիստի սիրտ այն ժողովրդի դէմ, որ թոյլ էր տալիս հին գերմանացիներին (ժերմեն) ծառայեցընել իր հաճոյքներին»։*) Այս բոլորը կարդալուց յետոյ մարդ մտածում է, որ Հէյնէն իրաւունք ունի, երբ ասում է, թէ «գերմանացիք աւելի քինախնդիր են, քան բոմանական ժողովուրդները, որովհետև նրանք (գերմանացիք) աւելի իդէալիստ են նոյնիսկ իրանց ոխի մէջ։ Մեր թշնամիների մէջ, շարունակում է Հէյնէ, մենք ատում ենք ամենաէականը, ամենաներքինը—նրա միտքը» **)։

Բաւականանանք այսքանով և դառնանք գերմանական խոշոր պատմագիրներին, որպիսիներն են՝ Նեբուր, Ռանկէ, Մոմզէն, Զիմբել, Տրէյչիկէ, որոնց աղդեցութիւնը իրանցից անկախ, թէ դիտաւորեալ՝ ահագին է եղել նոր Գերմանիայի վրայ։ Բայց այդ մասին յաջորդ անգամ։

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

---

*) A. Guilland: «L' Allemagne nouvelle».
**) Heine: «L' Allemagne», T I. p. 94.